դար» (էջ 19)· բայց գրիչը յիշատակարանին մէջ տարին մատնանշած է «Ազգիս Հայոց թուականին, կրկին քառեակ երկհարիւրին, ձի ամին», զոր իմանալուէ 2×4+2×100+120=ՌՃԻ, այն է 1671: Թ. 25 ձեռագրին դաղափար օրինակը գրուած է կ'ըսուի 1205ին (էջ 48)· բայց ձեռագիրն ունի «յամի վեցհարիւրորդի յիսներորդի», հաւանօրէն տպագրութեան ժամանակ դուրս ինկած է «եւ Դ»: Թ. 13 Աւետարանին գրչութեան տարին էջ 20ա երկիցս նշանակուած է «ՌՃԺԵ=1616»· իսկ բնագրին մէջ կ'ըսուի· «Ռ· եւ վաթսներորդի ամի եւ ԵԵրորդ աւելորդի (=1616)» (էջ 20բ): Էջ 25 Թ· 16 Աւետարանին տարին երկիցս դրուած է «ՌՃԶ=1617»· իսկ էջ 26ա «ՌՃԳ=1617» եւ 27ա «Ռ եւ ԾԶ»· այն է 1606· ա՛յս է ուղիղը: Տպագրական նման վրիպակներու շարքին են նաեւ հետեւեալները· էջ 48 «ի միտ բանակեաց»=«ի միաբանակեաց»· «աւետեաց»=Աւետեաց· 49ա· «որդիացելոցս իմոյ»=որդիացելոյս· 49բ· «տեառ Նորիչ»=տեառն որիչ: Էջ 74ա· «փիջնոյ»=միջնոյ· 74բ· «առ դերմանաւ»=առ Դերմանոս· «առման=առ Ման(ուէլ կայսր):

Յուցակագրութեան ժամանակ յաճախ «թերթք» եւ «թուղթք» չփոթուած են (հմմտ· Թ· 1—5, 9—13 եւն): Շատ անխնամ կազմուած է «Անուանց ցանկը»· շատ անուններ անտեսուած են (այսպէս չեն առնուած էջ 72—75 յիշուած անունները); ուրիշներ անճիշդ նշանակուած (էջ 48բ Հեթում Սեւաստոս, ցանկին մէջ՝ թագաւոր· էջ 83 Հին Զուղայ եւ էջ 14 Նոր Զուղայ, միացուած են)· ինչ ինչ անուններ ներս առնուած են տիտղոսի տակ (Խոջայ Ագնաւոր, Շահ Թահմազ, Պարոնտէր Մելքիսեթ), կան անուններ, որոնք բնագրին մէջ տարբեր եւ Անուանացանկին մէջ այլազգ են (Վաստկանայ=Վասականայ, Դաւնդիչ=Դաւնդեղ) եւ այլն: Խառնակ է նաեւ անուանացանկին այբուբենական կարգը:

Ձեռագրաց Ցուցակները, որոնք առաղձ պիտի մատակարարեն պատմական, լեզուական եւ մատենագրական ուսումնասիրութեանց համար, կը պահանջեն Ցուցակագիրներէն եւ Հրատարակիչներէն մեծ պատասխանատուութիւն:

Հ· Հ· ՈՍԿԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ուղարկուած Խմբագրութեանս:)

Աբրահամեան Պրոֆ· Դր· Ա·, *Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը: Ուսումնասիրութիւն (եւ Տեքստեր)*: Երեւան 1944, 8⁰, էջ 420: [ՀՍՍՌ Մատենադարանի Հրատարակչութիւն:]

Անառեան Հ·, *Հայոց լեզուի պատմութիւն: Մասն Ա·*: Երեւան 1940, 9⁰, էջ 357: [Երեւանի Պետական Համալսարանի հրատարակչութիւն:]

Անառեան Հ·, *Հայոց անձնանուններու բառարան: Հատոր Ա·*: Երեւան 1942, 9⁰, էջ ԻԴ+634: *Հատոր Բ·*: Երեւան 1944, 8⁰, էջ 682: *Հատոր Գ·*: Երեւան 1946, 8⁰, էջ 742: *Հատոր Դ·*: Երեւան 1948, 8⁰, էջ 686: [*Հայկական ՍՍՌ Մոլոտովի անվան Երեւանի Պետական Համալսարան: Գիտական աշխատութիւններ, հատոր ԻԱ, ԻԴ, ԻԵ, ԻԶ:*]

Ամիրտովլաթ Ամասիացի, *Օգուտ բժշկութեան (Բժիշկ Պունիաթ Սեբաստացու խմբագրած)*: *Ա· տպագրութիւն· ձեռագիրներուն բազդատութեամբ, առաջաբանով, ծանօթութիւններով եւ բառգրքոյկով· խմբագրութեամբ Ստ· Մալխասեանց*: Երեւան 1940, 8⁰ մեծ, էջ ԼԶ+580: [*ԽՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիա· Հայկական Ֆիլիալ: Պատմութեան եւ Հնագիտութեան Ինստիտուտ:*]

Զաքարիա Ագուլեցու *Օրագրութիւնը*: Երեւան 1938, 8⁰, էջ Ը+200: [*ԽՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիա· Հայկական Ֆիլիալի հրատարակչութիւն:*]

Մալխասեանց Ստ·, *Խորենացու առեղծվածի շուրջը*: Երեւան 1940, 8⁰, էջ 156: [*ՍՍՌՄ Գիտութիւնների Ակադեմիա· Հայկական Ֆիլիալ: Պատմութեան եւ նիւթական կուլտուրայի Ինստիտուտի հրատարակչութիւն:*]

Յովհան Մամիկոնեան, *Պատմութիւն Տարօնոյ: Աշխատութեամբ եւ առաջաբանով պատմաբան գիտութիւնների թեկնածու Աշ· Աբրահամեանի*: Երեւան 1941, 8⁰, էջ 300: [*Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետին կից Պետական Ձեռագրատուն (Մատենադարան): Տեքստեր*, Nr. 5:]

Նաճարեան Միհրան, *Ցուշագիրք 1918—1948: Երեւանմեայ ազգ· իրադարձութիւններ· Սուրիոյ եւ Լիբանանի կեանքէն առնուած: Պէյրութ 1949:*

Verlag: Mechitharisten-Kongregation. — Für den Inhalt verantwortlich P. Mesrop Habozian. — Druck: Mechitharisten-Druckerei. — Alle Wien 62, Mechitharistengasse 4.

© National Library of Armenia